

## Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

ՀՀ ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

### Ընթացիկ իրավիճակը և առկա խնդիրները.

17.06.1998թ. ընդունված և 01.01.1999թ. օրինական ուժի մեջ մտած ՀՀ գործող քաղաքացական դատավարության օրենսգիրքը Հայաստանի Հանրապետությունում իրականացվող դատաիրավական բարեփոխումների արդյունքում ընդունված կարևոր իրավական ակտերից է: Օրենսգիրքն ընդունման պահին բավականին առաջադիմական էր, քանի որ դրանում առաջին անգամ ամրագրվեցին արդարադատության իրականացման ժողովրդավարական հիմնական սկզբունքները և անձի իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունն ապահովող երաշխիքները:

Այն ընդունման պահին միասնական, համակարգված և համապարփակ ակտ էր, որը կարգավորում էր ոչ միայն քաղաքացիական դատավարական հարաբերությունները, այլ նաև վարչական դատավարության հարաբերությունները:

Սակայն օրենսգիրքն իր դրական հատկանիշներով հանդերձ զերծ չէր նաև թերություններից, որոնց մի մասը առկա էին օրենսգրքի ընդունման պահին, իսկ մյուսներն ի հայտ եկան դրա գործնական կիրառման ընթացքում:

Մասնավորապես ընդունման պահից օրենսգրքում նախատեսված են մի շարք ինստիտուտներ, որոնք իրենց գոյության ամբողջ ընթացքում կամ չստացան իրական պրակտիկ կիրառում (արագացված դատաքննություն), կամ չսպացուցեցին իրենց արդյունավետությունը(դատական ծանուցումներ և դատական ծախսեր):

Օրենսգրքի ավելի քան տասնհինգ տարվա գործածության ընթացքում դրանում կատարվեցին բազմաթիվ փոփոխություններ ու լրացումներ(նախատեսվեց նախնական դատական նիստը, լրիվ վերաքննությունից անցում կատարվեց անցում դեպի սահմանափակ վերաքննություն, մի քանի անգամ անընդմեջ նոր խմբագրման ենթարկվեց նոր և նոր երևան եկած հանգամանքների ուժով դատական ակտերի վերանայման վարույթը, օրենսգրքից հանվեցին վարչաիրավական բնույթի

դատավարական հարաբերությունները և այլն), որոնք կիրառման ընթացքում ունեցան ոչ միայն դրական, այլև բացասական դրսևորումներ:

ՀՀ կատարվող դատաիրավական բարեփոխումները (տնտեսական և քաղաքացիական դատարանների ստեղծումը և վերացումը, նոր դատական օրենսգրքի ընդունումը, վարչական դատարանների ստեղծումը) անընդհատ փոփոխությունների անհրաժեշտություն էր առաջացնում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում:

Չժխտելով փոփոխությունների մի ստվար մասի ողջամիտ և առաջադիմական բնույթը՝ այդուհանդերձ, դրանց մեծ մասը կատարվեց առանց հայեցակարգային մշակման և գիտական հիմնավորման: Բացի այդ, փոփոխություններն ու լրացումները համալիր չէին, առավելապես կրում էին դրվագային բնույթ, հաճախ համաձայնեցված չէին իրավական այլ ակտերի, ինստիտուտների և նորմերի հետ:

Վերը նշված փոփոխությունները կատարվում էին առանց իրավակիրառողի և փաստաբանական համակարգի հետ լուրջ վերապատրաստումների իրականացման, ինչը հանգեցնում էր իրավակիրառ պրակտիկայի խաթարման:

Սակայն տարիների ընթացքում փորձ չարվեց լուծել դատական ծախսերի, դատական ծանուցումների և պարզեցված վարույթի կատարելագործման հետ կապված խնդիրները, միջոցներ չձեռնարկվեցին դատարանների ծանրաբեռնվածության նվազման համար:

Քաղաքացիադատավարական իրավահարաբերությունների կարգավորման գործընթացի վրա նշանակալի ազդեցություն ունեցավ նաև դատական պրակտիկան: Մասնավորապես, Օրենսգրքի գործածության ընթացքում դրանում բացահայտված մի շարք թերություններ ու բացթողումներ իրենց գնահատականը ստացան ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներում:

Մասնավորապես, ՀՀ սահմանադրական դատարանը, մի շարք գործերով քննության առնելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի տարբեր հոդվածների սահմանադրականության հարցը, դրանց մի մասը ճանաչեց հակասահմանադրական՝ սահմանելով դատարանների կողմից գործի քննության ընթացքում կիրառման ենթակա պարտադիր իրավական դիրքորոշումներ: Միաժամանակ վերջին հինգ տարվա ընթացքում ՀՀ վճռաբեկ դատարանն ընդունեց

օրենքի միատեսակ կիրառման ապահովմանն ուղղված բազմաթիվ որոշումներ՝ տալով օրենսգրքի տարբեր դրույթների մեկնաբանություններ՝ ուղղված իրավակիրառ պրակտիկայի կարգավորմանը: Նշված որոշումներն ընդգծեցին օրենսգրքի որոշ կարևոր դրույթների անկատարությունը և թերի լինելը:

Այդ ամենը հանգեցրեց առաջին աստիճանի դատարաններում և վերաքննիչ դատարաններում ոչ միատեսակ պրակտիկայի, որի պայմաններում նույնանման փաստական հանգամանքների վերաբերյալ ընդունվում էին տարբեր որոշումները, ինչը խարխլում էր իրավական պետության հիմքում դրված իրավական որոշակիության սկզբունքը:

Բացի այդ ՀՀ գործող քաղաքացիական դատավարության օրենսգիրքը իրավական տեխնիկայի տեսանկյունից չի համապատասխանում «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի պահանջներին, քանի որ վերջինս ընդունվել է ավելի ուշ: Օրինակ՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի մի շարք բաժինները բաժանվում են հոդվածների, ինչն ակնհայտորեն հակասում է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի պահանջներին:

Վերոշարադրյալ խնդիրների ամբողջությունը, ինչպես նաև հասարակական հարաբերությունների մշտական զարգացումը ներկայումս հանգեցրել են այնպիսի մի իրավիճակի, որի պարագայում ՀՀ գործող քաղաքացիական դատավարության օրենսգրքում անհրաժեշտ է կատարել հիմնարար փոփոխություններ:

«Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության նախագահի 01.07.2012թ. կարգադրությամբ նախատեսվեցին դրույթներ ուղղված քաղաքացիական արդարադատության արդյունավետության բարձրացման:

Մասնավորապես կարգադրությամբ նախատեսվում է քաղաքացիական դատավարությունում սահմանել վերադաս դատարանի կողմից դատական ակտը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու դեպքում ստորադաս դատարանում գործերի քննության կարգի առանձնահատկություններ, մշակել նախնական դատական նիստի առավել ամբողջական կանոններ, հստակեցնել և կատարելագործել ապացուցման գործընթացը կարգավորող կանոնները,

դատավարական օրենսգրքերով հնարավորինս սպառիչ սահմանել նիստի հետաձգման հիմքերը՝ բացառելով նիստի հետաձգումը դրա համար չնախատեսված որևէ հիմքով, կատարելագործել դատական փորձաքննության նշանակման և անցկացման գործընթացը, ներդնել դատական վարույթների մասին ծանուցման առավել արդյունավետ մեթոդներ և դատական ծախսերի բաշխման արդար, թափանցիկ և հստակ համակարգ, կատարելագործել դատական քննության պարզեցված ընթացակարգերը և այլն:

Նշված փոփոխությունների նախատեսումը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում առանց այն նոր խմբագրության շարադրման անհնար է:

Այսինքն ներկայումս ՀՀ քաղաքացիական դատավարությունում անհրաժեշտ է, կատարելով հիմնարար փոփոխություններ, լուծել վերը նշված բոլոր խնդիրները, ինչի արդյունքում ՀՀ քաղաքացիական դատավարությունում կապահովվի մրցակցության և գործը ողջամիտ ժամկետում քննելու սկզբունքների կենսագործումը, առաջին ատյանի և վերաքննիչ դատարաններում գործերի միատեսակ քննությունը:

### **Առաջարկվող լուծումները.**

Նոր խմբագրությամբ շարադրվող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նախագծի առաջնային ուղղություններից է նախնական դատական նիստի նշանակության բարձրացումը: Դրանով պայմանավորված գործին մասնակցող անձանց հետևյալ տնօրինչական լիազորությունների իրականացման հնարավորությունը պետք է սահմանափակել մինչև նախնական դատական նիստի ավարտը՝ հայցի առարկան կամ հիմքը փոփոխելու վերաբերյալ միջնորդության ներկայացումը, նոր պատասխանողի ներգրավումը կամ պատասխանողի փոխարինումը, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձի կողմից դատավարության մեջ մտնելը, ապացույցներ ներկայացնելը:

Նախագծով առաջարկվում է ըստ հաջորդականության սահմանել նախնական դատական նիստի ընթացքում դատարանի գործողությունների կատարման հաջորդականությունը: Նախնական դատական նիստը պետք է ունենա երկու

նպատակ՝ ապացուցման պարտականության բաշխումը և ապացույցների հավաքումը:

Նախնական դատական նիստի առաջնային խնդիրը պետք է հանդիսանա քննվող գործով ապացուցման առարկան որոշելը, անվիճելի փաստերի շրջանակը որոշելը, ապացուցման պարտականության բաշխելը:

Ընդ որում այդ որոշումը պետք է կայացվի առանձին ակտի ձևով, և դրանում ցանկացած փոփոխություն նույնպես պետք է կատարվի առանձին ակտի ձևով: Սակայն այդ որոշումը կարող է փոփոխվել մինչև նախնական դատական նիստի ավարտը: Նշված որոշումը առանձին ակտի ձևով կայացնելը, ինչպես նաև նախնական դատական նիստի ավարտից հետո այն փոփոխելու արգելքը, բացառությամբ առանձին դեպքերի, կապահովի քաղաքացիական դատավարության կանխատեսելիությունը, հստակ կդարձնի գործին մասնակցող անձանց համար նրանց անելիքը քաղաքացիական դատավարության ընթացքում, կթեթևացնի դատական քննության բեռը:

Անհրաժեշտ է հստակ կանոնակարգել դատաքննության ընթացքը և դրա ընթացքում դատավարական գործողությունների կատարման հաջորդականությունը: Այդ նպատակով անհրաժեշտ է սահմանել, որ դատաքննությունը պետք է բաղկացած լինի երեք փուլերից՝ գործին մասնակցող անձանց բացման խոսքը, ապացույցների հետազոտում և դատական վիճաբանությունները՝ բացառելով դատարանի կողմից գործի քննությունը վերսկսելու իրավագործությունը: Անհրաժեշտ է սահմանել, որ դատական վիճաբանություններից հետո առաջին ատյանի դատարանը կարող է մինչև 10 օր ժամկետով հետաձգել դատական նիստը գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի վերաբերյալ գործին մասնակցող անձանցից լրացուցիչ պարզաբանումներ ստանալու համար: Սակայն դեպքում առաջին ատյանի դատարանը, բացի գործին մասնակցող անձանցից լրացուցիչ պարզաբանումներ ստանալուց, որևէ այլ գործողություն կատարելու իրավունք չունի:

ՀՀ գործող քաղաքացիական դատավարության համաձայն գործին մասնակցող անձինք կարող են դատաքննության ընթացքում ներկայացնել լրացուցիչ ապացույցներ, եթե դրանք ներկայացնողը հիմնավորում է մինչև դատաքննություն նշանակելու մասին որոշումը նման ապացույցի ներկայացման անհնարիությունը՝

իրենից անկախ պատճառներով: Նախագծով առաջարկվում է սահմանել, որ այդ ապացույցն ընդունելու դեպքում, առաջին ատյանի դատարանը գործին մասնակցող անձանց պետք է տրամադրի ողջամիտ ժամկետ՝ ապացույցին ծանոթանալու և դրա թույլատրելիության և արժանահավատության վերաբերյալ ապացույցներ ներկայացնելու համար, որի պայմաններում կլուծվի գործող օրենսգրքում առկա օրենսդրական բացը:

Նախագծում առաջարկվում է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի օրինակով մեկ գլխի մեջ սահմանել դատական նիստի ընդհանուր կանոնները, որոնք կիրառելի կլինեն դատական վարույթի բոլոր փուլերի համար: Ի կատարումն ՀՀ Նախագահի կարգադրություն սույն գլխում անհրաժեշտ է նախատեսել նաև դատական նիստերի հետաձգման հնարավորինս բոլոր սպառիչ հիմքերը: Մեկ գլխի մեջ առաջարկվում է միացնել նաև հայցն առանց քննության թողնելը և գործի վարույթը կարճելը՝ այն վերնագրելով որպես գործի վարույթի ավարտ առանց այն ըստ էության լուծելու:

Քաղաքացիական դատավարությունում օգտագործվող հասկացությունների միատեսակ կիրառությունն ապահովելու անհրաժեշտությունից ելնելով՝ նախագծով առաջարկվում է սահմանել համապատասխան հասկացությունների ցանկ՝ դրանում սահմանվելով օրինակ՝ դատավարության մասնակիցների, հայցի առարկայի, դրա փոփոխման, հայցի փաստական և իրավական հիմքերի, գործն ըստ էության լուծող, գործն ըստ էության չլուծող, միջանկյալ, վերջնական դատական ակտերի հասկացությունը:

Ի կատարումն ՀՀ նախագահի կարգադրության՝ նախագծով փորձ է արվել կատարելագործել դատական փորձաքննության նշանակման և անցկացման գործընթացը: Մասնավորապես նախագծով առաջարկվում է գործի մասնակցող անձի բերած փորձագիտական եզրակացությունն իր ապացուցողական նշանակությամբ հավասարեցնել դատարանի կողմից նշանակված փորձաքննության, եթե այն կատարած փորձագետը մինչև նախնական դատական նիստի ավարտը դատարանի առջև գրավոր հաստատում է այն՝ նախագգուշացվելով ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար քրեական պատասխանատվության մասին:

Բացի այդ առաջարկվում որպես ապացույցի ինքնուրույն տեսակ փորձագետի ցուցմունքը՝ նշելով, որ փորձագետն իր եզրակացությունը ներկայացնելուց հետո այդ եզրակացությունը ճշգրտելու և պարզաբանելու նպատակով առաջին ատյանի դատարանի նախաձեռնությամբ կամ գործին մասնակցող անձի միջնորդությամբ կարող է հրավիրվել հարցաքննության: Ընդ որում նախագծով սահմանվում է, որ փորձագետը հատուկ գիտելիքների կապակցությամբ հարցաքննվում է միայն իր կողմից նախապես տրված գրավոր եզրակացության շրջանակներում:

Փորձագետի եզրակացության դեմ առարկելու արդյունավետ կառուցակարգ սահմանելու, ինչպես նաև դատաքննության կանխատեսելիությունն ապահովելու նպատակով առաջարկվում է սահմանել, որ գործին մասնակցող անձը մինչև նախնական դատական նիստի ավարտը պարտավոր է առաջին ատյանի դատարանին ներկայացնել փորձագետի եզրակացության թույլատրելիության, արժանահավատության և հիմնավորվածության վերաբերյալ գրավոր առարկություն,

Մինչև նախնական դատական նիստի ավարտը գրավոր առարկություն չներկայացնելու դեպքում, գործին մասնակցող անձը չի կարող գործի հետագա քննություն ընթացքում վիճարկվել փորձագետի եզրակացության թույլատրելիությունը, արժանահավատությունը և հիմնավորվածությունը:

Միաժամանակ նախագծում կատարելագործվել են ապացուցման պարտականություն(օրինակ՝ ժխտող անձի վրա չի կարող դրվել հակառակն ապացուցելու պարտականությունը)ապացույցի թույլատրելիության, վերաբերելիության, ապացույցների գնահատման կանոնները:Կատարելագործվել են ապացուցման կարիք չունեցող փաստերի շրջանակը:

Մասնավորապես նախագծով սահմանվել է, որ ապացուցման կարիք չունեն գործին մասնակցող անձի կողմից վկայակոչվող այն փաստերը, որոնք գործին մասնակցող մյուս անձինք ընդունում են: Որպես այդ նորմի բացառություն են սահմանվել այն դեպքերը, երբ այդ

1)ընդունվող փաստը ներառված չէ գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի շրջանակում.

2)առկա են ողջամիտ կասկածներ, որ գործին մասնակցող մյուս անձինք այն ընդունել են խաբեության, բռնության, սպառնալիքի, մոլորության ազդեցության տակ,

մեկ կողմի ներկայացուցչի հետ մյուս կողմի չարամիտ համաձայնության հետևանքով կամ ճշմարտությունը թաքցնելու նպատակով.

3) այդ փաստը կարող է հաստատվել միայն օրենքով, այլ իրավական ակտով կամ պայմանագրով սահմանված որոշակի ապացույցով.

4) այդ փաստի հաստատումն անխուսափելիորեն ազդում է գործին չմասնակցող անձի՝ գործին մասնակցող անձանցից որևէ մեկի նկատմամբ ունեցած իրավունքների կամ պարտականությունների վրա:

Նախագծում էական փոփոխություններ են կատարվել դատական ծախսերին վերաբերող գլխում: Գործող քաղաքացիական դատավարության օրենսգրքում դատական ծախսերին նվիրված գլուխը բաղկացած է ընդամենը 6 հոդվածից, ինչը բավարար չէ տվյալ բնագավառում ծագող հարցերը համապարփակ կարգավորելու համար:

Դատական ծախսերին վերաբերող գլխում լուրջ խնդիրների առկայության և այդ գլխի կատարելագործման անհրաժեշտության մասին է վկայում այն հանգամանքը, որ դեռևս 1999թ. մարտի 27-ին ՀՀ դատարանների նախագահների խորհուրդն ընդունել էր N 8 որոշումը՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 68-73 հոդվածները և «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը կիրառելու դատական պրակտիկայի մասին»: Տվյալ որոշմամբ ոչ ամբողջապես, սակայն մասնակիորեն փորձ էր կատարվել կարգավորել առկա խնդիրները:

Նախագծով հստակեցվել և ընդլայնվել է դատական ծախսերի կազմը, կատարելագործվել են հայցագինը որոշելու և պետական տուրքը գանձելու կանոնները: Մասնավորապես, սահմանվել է, որ հայցագնի մեջ չի ներառվում դատական ծախսերի գումարը, իսկ դատական ակտը միայն դատական ծախսերի մասով բողոքարկելու դեպքում բողոք բերող անձից պետական տուրք չի գանձվում:

Նախագծով սահմանվել է նաև, որ գործի քննության ընթացքում հայցի առարկան փոփոխելու դեպքում պետական տուրքի գումարի չբավականացնող մասը, գանձվում է հայցի առարկան փոփոխելիս՝ փոփոխված հայցի առարկային համապատասխան, իսկ ավելացած մասը չի վերադարձվում: Միևնույն ժամանակ, գործի քննության ընթացքում գործին մասնակցող անձանց միջև հաշտության համաձայ-



նության կնքումը խրախուսելու նպատակով, սահմանվել է, որ եթե գործի քննության ընթացքում հայցվորը փոփոխել է հայցի առարկան այնպես, որ առաջացել է պետական տուրքի ավել վճարված մաս, ապա այդ ավել վճարված մասը ենթակա է վերադարձման միայն այն դեպքում, երբ գործի քննության ընթացքում փոփոխված հայցապահանջների մասով կնքվել է հաշտության համաձայնություն:

Նախագծում մանրամասն անդրադարձ է կատարվել գործի քննությանը ներգրավված վկաների, փորձագետների և թարգմանիչների կրած դատական ծախսերի փոխհատուցման հարցին. սահմանվել են այդ ծախսերի չափը հաշվարկելու կարգը, ծախսերը փոխհատուցելու կարգը և ժամկետները:

Անդրադարձ է կատարվել նաև փաստաբանների ողջամիտ վարձատրության հետ կապված նորմին: Սահմանվել են այն չափանիշները, որոնց հիման վրա պետք է որոշվի փաստաբանին վճարվելիք կամ վճարված գումարի չափի ողջամտությունը:

Նախագծով սահմանվել են դատական ծախսերի բաշխման մանրամասն կանոններ: Հստակեցվել են ընդհանուր կանոններն այն մասին, թե դատական ծախսերը որ դեպքում ումից և ինչ չափով են ենթակա բռնագանձման (հայցի մասնակի բավարարում, գործի կարճում և այլն): Բացի դրանից, սահմանվել են նաև որոշակի բացառություններ այդ ընդհանուր կանոններից: Օրինակ՝ եթե գործը կարճվել է այն պատճառով, որ պատասխանողը գործի քննության ընթացքում կամավոր կատարել է հայցվորի պահանջները, ապա դատական ծախսերը ենթակա են բռնագանձման հենց պատասխանողից, այլ ոչ թե հայցվորից:

Նախագծում բավականին անդրադարձ է կատարվել դատական ծանուցումների և ծանուցագրերին վերաբերող գլխին: Մանրամասն սահմանվել են այն դեպքերը, երբ անձը քաղաքացիական դատավարության օրենսգրքի իմաստով համարվում է պատշաճ ծանուցված՝ առանց ծանուցագիրը փաստացի ստանալու: Սահմանվել են նաև ծանուցագիրը ստանալուց հրաժարվելու հետևանքները. ծանուցագիրը ստանալուց հրաժարվելը հավասարեցվում է այն հանձնված լինելուն:

Որպես ծանուցման լրացուցիչ եղանակ, սահմանվել է բջջային հեռախոսով ծանուցումը կատարելու հնարավորություն: Նախագծի համաձայն՝ դատավարության մասնակիցները դատարանին կարող են գրավոր ներկայացնել իրենց բջջային

հեռախոսի համարը՝ խնդրելով դատարանին դատական ծանուցումը կատարել հեռախոսակապի միջոցով:

Սահմանվել է նաև դատական ծանուցման մեխանիզմ այն դեպքերի համար, երբ դատավարության մասնակիցը գտնվում է կալանավայրում, ազատագրկման վայրում, գորամասում, կարգապահական գումարտակում կամ բուժական հիմնարկում ստանում է ստացիոնար բուժում: Նախագծի համաձայն՝ այդ դեպքում դատական ծանուցագիրը պետք է ուղարկվի այդ հաստատությունների հասցեներով: Այդ հաստատությունների վարչակազմերը դատական ծանուցագիրը ստանալուն պես պարտավոր են այն հանձնել հասցեատիրոջը:

Նախագծով էականորեն կատարելագործվել են դատական ակտերի կառուցվածքներին ներկայացվող պահանջները:

Հաշվի առնելով պարզեցված վարույթների կատարելագործման անհրաժեշտությունը՝ նախագծում որոշակի փոփոխությունների է ենթարկվել նաև վճարման կարգադրություն արձակելու գործերի վարույթը: Մասնավորապես, լրամշակվել են վճարման կարգադրություն արձակելու մասին դիմումին ներկայացվող պահանջները՝ դրանցում ընդգրկելով նաև դիմողի հետ կապ հաստատելու հնարավորություն ընձեռող որոշակի տվյալները: Իսկ գործող դատավարական օրենքում օգտագործվող «պատասխանող» բառը փոխարինվել է առավել ընդունելի «պարտապան» բառով, քանի որ կասկած չի հարուցում այն ճշմարտությունը, որ հատուկ վարույթներում չի կարող լինել պատասխանող կողմ:

Լրամշակման են ենթարկվել նաև վճարման կարգադրություն արձակելը մերժելու համար հիմք հանդիսացող դեպքերը: Այսպես, ի տարբերություն գործող կարգավորումների, դրանց շարքում են ներառվել նաև հայցադիմումի ընդունումը մերժելու, հայցադիմումը վերադարձնելու, ինչպես նաև հայցն առանց քննության թողնելու հիմք հանդիսացող հանգամանքները և այն դեպքը, երբ առկա է նույն անձանց վերաբերյալ, միևնույն հիմքերով և միևնույն պահանջի մասին օրենքով սահմանված ժամկետում չբողոքարկված վճարման կարգադրություն արձակելու մասին դիմումի մերժման մասին որոշում:

Նախագծում առկա նորամուծություններից մեկն էլ այն է, որ դրանում վճարման կարգադրությունը արձակելը մերժելու մասին որոշումը դիտարկվել է

որպես բողոքարկման ենթակա: Այսպիսի մոտեցման համար հիմք է ընդունվել այն դիրքորոշումը, որ ներկայիս իրավակարգավորումը, այսինքն՝ երբ այդ որոշումը ենթակա չէ բողոքարկման, բավականին լուրջ նախադրյալ է ստեղծում դատական կամայականության համար: Իսկ դրա արդյունքում քաղաքացիական շրջանառության պահանջները արագ կերպով հոգալուն միտված այս ինստիտուտը դառնում է ընդամենը հռչակագրային բնույթ կրող:

Քննարկվող վարույթի շրջանակներում հստակեցվել են նաև այն դեպքերը, թե երբ է վճարման կարգադրությունը կորցնում իր ուժը և ինչպիսին է դրա դատավարական կարգը: Մասնավորապես, եթե ներկայումս վճարման կարգադրության վերացման միակ հիմք է դիտարկվում պարտապանի կողմից առարկություն ներկայացնելու դեպքը, ապա նախագծում որպես վճարման կարգադրության վերացման հիմք նախատեսվել են այն դեպքերը, երբ պարտապանը կատարել է վճարման կարգադրությունից բխող պահանջը, ինչպես նաև երբ դիմումում նշված հասցեով վճարման կարգադրությունը հնարավոր չի եղել առաքել պարտապանին: Ընդ որում, սահմանվել է, որ վճարման կարգադրությունը վերացնելու մասին դատարանը կայացնում է որոշում՝ դրանով իսկ որոշակիացնելով դատարանի գործողությունները:

Նախագծում առանձնակի ուշադրություն է դարձվել նոր երևան եկած և նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթի՝ որպես քաղաքացիական դատավարության բացառիկ փուլի համապարփակ իրավակարգավորումների ապահովման խնդրին: Ի տարբերություն ներկայիս՝ այն արդարացիորեն զետեղվել է վերաքննիչ և վճռաբեկ վարույթները կարգավորող բաժիններից հետո: Միևնույն ժամանակ, վերաքննիչ և վճռաբեկ վարույթների վերաբերյալ դրույթներից բացառվել են նոր երևան եկած և նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթի հետ կապված դատավարական հարաբերությունները կարգավորող կանոնները՝ դրանով իսկ ընդգծելով նշված վարույթի ինքնուրույնությունը: Բացի այդ, խնդրի այս կերպ լուծման արդյունքում վերացվել է նաև նույն հարցի վերաբերյալ տարբեր վարույթները կարգավորող երկու դրույթների հնարավոր հակասությունների առաջացման հնարավորությունը:

Պետք է նշել, որ նախագծի՝ նոր երևան եկած և նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթը կարգավորող բաժնի դրական կողմերը վերոհիշյալով չեն սպառվում: Ըստ էության պահպանելով գործող իրավակարգավորման տրամաբանությունը՝ նախագծում փորձ էլ կատարվել էլ ավելի կատարելագործել քննարկվող ինստիտուտի: Ընդ որում, այս նպատակի իրագործման համար հիմք է ընդունվել ոչ միայն ՀՀ օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի վերլուծությունը, այլև ուսումնասիրվել է միջազգային փորձը և դատավարագիտության մեջ ձևավորված մոտեցումները:

Մասնավորապես, նախագծում հստակեցվել են բողոք բերելու իրավասության օժտված սուբյեկտների շրջանակը, քանի որ գործող կարգավորումների նույնիսկ համակարգային վերլուծությունը ոչ միշտ է հանգեցնում միանշանակ եզրակացությունների, իսկ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 204.31-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերի ձևակերպումները, նպատակ ունենալով ՀՀ Սահմանադրական դատարանի համապատասխան որոշումներում արտահայտված դիրքորոշումների լույսի ներքո բարձրացնել այս վարույթի կիրառելիության արդյունավետությունը, հանգեցրել են մեկ այլ ծայրահեղության: Խոսքը այն մասին է, որ դրանցում օգտագործվող «այն անձինք» արտահայտության տառացի մեկնաբանության դեպքում ստացվում է, որ անձը համապատասխան պայմանները բավարարելու դեպքում կարող է բերել դատական ակտը նոր երևան եկած և նոր հանգամանքներով վերանայելու մասին բողոք՝ անկախ նրանից հանդիսանում է տվյալ գործող գործին մասնակցող անձ, թե ոչ: Իսկ այս հանգամանքը, բնականաբար, չի կարող համատեղելի լինել քաղաքացիական դատավարության նպատակների հետ:

Նախագծում որոշակի փոփոխությունների են ենթարկվել դատական ակտի վերանայման հիմք հանդիսացող նոր երևան եկած հանգամանքների շրջանակը: Այսպես, դրանց շարքից դուրս է բերվել դատարանի վճռի համար հիմք ծառայած դատական կամ վարչական ակտի վերացման հիմքը, քանի որ այն իր էությամբ չէր համապատասխանում «նոր երևան եկած հանգամանք» հասկացությանը, և այն շարադրվել է նոր հանգամանքների շարքում:

Բացի այդ, իրավակիրառ պրակտիկայի ուսումնասիրության արդյունքներով արձանագրվել է քննարկվող վարույթի հարուցման տեսանկյունից կարևորվող ևս մեկ

հիմք: Մասնավորապես, որպես այդպիսին հանդիսանում է դատական ակտի կայացման համար հիմք հանդիսացող գործարքի անվավեր ճանաչումը, որն էլ զետեղվել է նոր հանգամանքների շարքում:

Նախագծում փորձ է արվել նաև հստակեցնել նոր երևան եկած և նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման բողոք ներկայացնելու համար սահմանված ժամկետի հաշվարկման ելակետերը: Բանը նրանում է, որ գործող կարգավորումների համաձայն որպես մեկնակետ է սահմանվում այն պահը, երբ անձը իմացել է կամ կարող էր իմանալ: Եվ դա այն դեպքում, երբ, հաշվի առնելով նոր երևան եկած կամ նոր հանգամանքի յուրաքանչյուր խմբի առանձնահատկությունները, կարելի է որոշակիացնել բարձրացված հարցը:

Միևնույն ժամանակ, որպես նորամուծություն է հանդիսանում գործին մասնակցող անձի իրավահաջորդի կողմից բողոք բերելու ժամկետի հաշվարկման կանոնի ամրագրումը, քանի որ գործող դատավարական օրենքը որևէ հատուկ կանոն այս կապակցությամբ չի նախատեսում:

Որպես առաջարկվող իրավակարգավորման դրական կողմ կարելի է մատնանշել այն մասին, որ հանվել է ՀՀ Սահմանադրական դատարանի որոշման հիմքով բողոք բերելիս այդ որոշումը կցելու պարտականությունը: Նման մոտեցման համար հիմք է ընդունվել այն պարզ իրողությունը, որ ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումը իրենից ներկայացնում է նորմատիվ իրակական ակտ, իսկ քաղաքացիական դատավարությունում գործում է դատավորի կողմից օրենքի պատշաճ իմացության կանխավարկածը (*jura novit curia*):

Նախագծում նաև լուծում է տրվել այն հարցին, թե ինչ դատավարական գործողություններ պետք է կատարի դատարանը այն դեպքում, երբ բողոքը բերող անձը բողոքը ներկայացնում է դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու պահից քսան տարին անցնելուց հետո: Բանը նրանում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը առանց որևէ վերապահման բացառում է դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո քսան տարին լրանալու պայմաններում դատական ակտի վերանայում, բայց ևս չի նախատեսել նման բողոքների կապակցությամբ դատարանի կողմից կատարվելիք գործողությունները: Այդ իսկ պատճառով, ինչպես նաև հաշվի առնելով Մարդու իրավունքների եվրոպական

դատարանի կողմից իրավական որոշակիության սկզբունքի կապակցությամբ ձևավորած մոտեցումները, նախագծում քննարկվող դեպքը դիտարկվել է որպես բողոքի վերադարձման հիմք:

Նախագծով կատարելագործվել է վերաքննության ինստիտուտը: Նախ և առաջ, հատակ սահմանվել է որոշումների այն սպառիչ ցանկը, որոնք ենթակա են բողոքարկման վերաքննության կարգով: Որպես այդպիսին՝ մասնավորապես սահմանվել են հայցի ապահովման (հակընդդեմ ապահովման) միջոց կիրառելու, հայցի ապահովումը (հակընդդեմ ապահովումը) մերժելու, հայցի ապահովման մեկ միջոցը մեկ այլ միջոցով փոխարինելու կամ փոխարինումը մերժելու, հայցի ապահովման միջոցը վերացնելու կամ վերացնելը մերժելու մասին որոշումները:

Որպես գործին մասնակցող անձանց դատավարական իրավունքների ապահովման երաշխիք, սահմանվել է, որ վերջնական դատական ակտի հրապարակման ժամանակի և վայրի մասին պատշաճ չճանուցված գործին մասնակցող անձինք իրավունք ունեն վերաքննիչ բողոք բերելու այն օրվանից սկսած՝ երեք ամսվա ընթացքում, երբ իմացել են կամ պարտավոր էին իմանալ դատական ակտի կայացման մասին:

Սահմանվել է վերաքննիչ բողոքի վարույթ ընդունումը մերժելու ինստիտուտ՝ այն դեպքերի համար, երբ բողոքում առկա թերությունները անվերացվելի են: Հակառակ դրան, նեղացվել է վերաքննիչ բողոքը վերադարձնելու հիմքերի շրջանակը:

Սահմանվել են վերաքննիչ դատարանում գործի քննության ժամկետները: Ելնելով գործն ըստ էության լուծող և չլուծող դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքներով գործերի քննության էական տարբերություններից՝ գործն ըստ էության չլուծող դատական ակտերի դեմ բերված բողոքների համար սահմանվել է գործի քննության տարբերակվող կարգ. դատարանի որոշումների դեմ բերված վերաքննիչ բողոքները քննվում և դրանց վերաբերյալ որոշումները կայացվում են առանց դատական նիստ հրավիրելու:

Նախագծով սահմանվել և մանրամասնեցվել են այն դեպքերը, երբ վերաքննիչ դատարանն իրավունք է ստանում հետազոտել ապացույցներ և (կամ) ընդունել նոր ապացույցներ:

Սահմանվել են այն դեպքերը, երբ վերաքննիչ դատարանն իրավունք ունի դուրս գալ վերաքննիչ բողոքի հիմքերից և հիմնավորումներից և բեկանել դատական

ակտը. անկախ վերաքննիչ բողոքի հիմքերից և հիմնավորումներից՝ վերաքննիչ դատարանը ստուգում է դատական ակտի անվերապահ բեկանման հիմքերի առկայությունը, գործի վարույթը կարճելու և հայցն առանց քննության թողնելու հիմքերի առկայությունը: Բացի դրանից, լրամշակվել և ավելացվել են դատական ակտի անվերապահ բեկանման հիմքերը

Հստակեցվել են վերաքննիչ դատարանի կոնկրետ այս կամ այն լիազորությունների կիրառման իրավաչափության պայմանները և սահմանափակումները, օրինակ՝ վերաքննիչ դատարանը չի կարող կիրառել դատական ակտը բեկանելու և փոփոխելու լիազորությունը, եթե եկել է այն եզրահանգման, որ դատարանը սխալ է որոշել ապացուցման առարկան, սխալ է որոշել անվիճելի փաստերի շրջանակը կամ սխալ է բաշխել ապացուցման պարտականությունը:

Նախագծի առկա բարեփոխումների առավել կարևոր ուղղություններից մեկը դատական ակտերին ներկայացվող պահանջների վերանայումն է և դատական ակտի իրավական հիմնավորվածության սկզբունքի ապահովումը: Այս առումով, մանրամասնեցվել են վերաքննիչ դատարանի դատական ակտերին ներկայացվող պահանջները:

ՀՀ գործող քաղաքացիական դատավարության օրենսգրքի ընդունումից հետո ձևավորված դատական պրակտիկան ցույց է տվել, որ վերաքննիչ դատարանը, գործող քաղաքացիական դատավարության օրենսգրքի համաձայն, զրկված է մի շարք էական նշանակություն ունեցող լիազորություններից (վերաքննիչ դատարանի որոշման մեջ առկա վրիպակների, գրասխալների և թվաբանական սխալների ուղղման իրավունք, դատական ծախսերի հարցը չլուծելու դեպքում լրացուցիչ դատական ակտ կայացնելու իրավունք և այլն): Նախագծում նաև լուծում է տրվել այս հարցերին:

Օրենքով որպես հատուկ հայցվային վարույթի տեսակ առաջարկվում է ընտանեկան գործերը: Ելնելով այդ գործերի առանձնահատկություններից՝ նախագծով առաջարկվում է, ի տարբերության գործերի քննության ընդհանուր կարգի, այդ գործերի հիմքում դնել ի պաշտոնե քննության մոդելը: Ընտանեկան գործերով հատուկ հայցային վարույթը համապատասխանեցվել է Ընտանեկան օրենսգրքի պահանջներին:

Նախագծով նախատեսվել է նաև խմբային հայցի վարույթը: Կոլեկտիվ հայցերի հիման վրա հարուցված քաղաքացիական գործերն ունեն մի շարք առավելություններ, քանի որ դրանք մեծ թվով անհատական պահանջներ միավորում են մեկ ներկայացուցչական քաղաքացիական գործում: Նման միավորումը կարող է բարձրացնել դատավարության արդյունավետությունը եւ նվազեցնել դատական ծախսերը: Իրավունքի եւ փաստերի նույն հարցերը ներառող գործերի դեպքում պահանջների միավորումը խմբային հայցում կարող է դատավարությունից դատավարություն նույն վկաների, իրեղեն ապացույցների եւ քննվող հարցերից խուսափելու հնարավորություն ընձեռել:

Կոլեկտիվ հայցերի ընթացակարգի ներդրումը կարող է լուծել այն խնդիրը, որ փոքր չափերի հատուցումները որեւէ անձի չեն շահագրգռում իր իրավունքների իրականացման համար առանձին հայց հարուցել: Կոլեկտիվ հայցը լուծում է այս խնդիրը՝ հավանական աննշան հատուցումների միավորումից ստանալով որեւէ մեկի (սովորաբար փաստաբանի) աշխատանքին համարժեք գումար: Այլ կերպ ասած՝ կոլեկտիվ հայցն ապահովում է, որ պատասխանողը, ով լայնածավալ վնասի հանգեցնող գործողություններ է կատարում՝ յուրաքանչյուր անհատ հայցվորին դրանով պատճառելով փոքր չափի վնաս, այնուամենայնիվ, փոխհատուցի նրանց պատճառած վնասը: Հավանաբար փոխհատուցումից ավելի կարելոք է այն, որ պահանջների համատեղ քննությունը կարող է հանդիսանալ իրավախախտման առաջացրած ծախսերը հոգալու պարտավորությունը իրավախախտի վրա դնելու միակ եղանակը, ինչն իր հերթին կկանխի հետագա իրավախախտումները:

Կոլեկտիվ հայցերի ներդրման պահանջ նախատեսված է նաեւ ՀՀ Նախագահի 2009թ. ապրիլի 21-ի թիվ ՆԿ-59-Ն կարգադրությամբ հաստատված «Դատախրավական բարեփոխումների 2009-2011 թվականների ռազմավարական գործողությունների ծրագրից բխող միջոցառումների» ցանկի 3.15-րդ կետով, ինչպես նաեւ «Աջակցություն Հայաստանում արդարադատության ոլորտի բարեփոխումներին» ծրագրի միջոցառումների ցանկով:

Նախագծի հաջորդ կարևոր առաջարկություններից է գործող օրենսգրքում նախատեսված մի շարք հատուկ վարույթների արտադատականուցումը և դրանք որպես նոտարական գործողությունների սահմանումը: Մասնավորապես նախագծով



առաջարկվում է որպես նոտարական գործողություն սահմանել հետևյալ հատուկ վարույթները՝

1. Անչափահասին լրիվ գործունակ /Էմանսիպացիա/ ճանաչելու մասին գործեր.
2. Երեխայի որդեգրման վերաբերյալ գործեր.
3. Անձին անհայտ բացակայող կամ մահացած ճանաչելու մասին գործեր.
4. Իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման գործեր.
5. Ըստ ներկայացնողի և օրդերային կորցրած արժեթղթերով հավաստված իրավունքները վերականգնելու գործեր:

Դատարանների յուրիսդիկցիոն գործունեության պարագայում ավանդաբար ընդունված է համարել, որ այն առավել արդյունավետ և անաչառ ընթացակարգ է, որն ընթանում է օրենքով կոնկրետ ու խստորեն սահմանված ընթացակարգային գործողությունների հաջորդականությամբ, որոնց ընթացքում էլ ի հայտ են գալիս և սկսում գործել այնպիսի դատավարական երաշխիքներ և սկզբունքներ, ինչպիսիք են օրինականությունը, հավասարությունը, մրցակցությունը, անաչառությունը, անկախությունը, բանավորությունը, հրապարակայնությունը, անմիջականությունը և այլն:

Ընդ որում, օրենսդիրը դատարանի իրավասության է հանձնել նյութաիրավական առումով էական առանձնահատկություններ և տարբերություններ ունեցող գործեր, որոնք ծագում են իրավունքի ամենատարբեր ճյուղերից: Դրանց հարուցման, քննության և լուծման հարցերը իրենց հերթին ազդում են իրենց դատական պաշտպանության ձևի իրականացման կարգի վրա, որից ելնելով էլ անջրպետ է դրվել դատական վարույթների հարցում՝ տարանջատելով դրանք հայցային վարույթի և հատուկ վարույթի:

Եվ եթե առաջինը հարուցվում և իր գոյատևումը պայմանավորում է իրավաբանորեն հակադիր շահերով օժտված երկու կողմերի /հայցվոր-պատասխանող/ առկայությունը, որոնց պայմանականորեն միացնում է իրենց միջև ծագած իրավունքի մասին վեճի գոյությունը և դրա լուծման կապակցությամբ մեկ մեկու հանդեպ ներկայացված նյութական պահանջի, իսկ արդյունքում էլ՝

դատարանին ուղղված իրավական պահանջի առկայությունը, ապա հատուկ վարույթի դեպքում իրավունքի մասին վեճի լուծման հարց երբևէ չի շոշափվում, այստեղ չկան հակադիր շահերով բնեռացված կողմեր, բացակայում է նաև մի կողմի՝ մյուսին ներկայացվող նյութական պահանջը:

Այստեղ վարույթի կիզակետը ոչ թե որևէ մեկի սուբյեկտիվ իրավունքն ու դրա պաշտպանությունն է, այլ անձանց օրենքով պահպանվող և ենթադրվող շահերը, նրանց վերաբերող իրավական կարգավիճակները, իրավիճակները, իրավունքների ծագման, փոփոխման կամ դադարման հիմք հանդիսացող իրավաբանական փաստերն օրենքով սահմանված թույլատրելիությամբ ամրագրելու, հաստատելու, անհերքելի, անվիճելի դարձնելու իրողությունը, որի իրականացումից հետո դատարանի և վերջինիս իրավական պահանջով դիմած անձի խնդիրները, կարծեք թե, սպառվում են, և որի սահմանագծից էլ, հիմք ընդունելով հատուկ վարույթի ընթացքում արձակված դատարանի դատական ակտի պահանջները, սկիզբ է դրվում այլ մարմինների վարչարարություն-գործունեությունը:

Հատուկ վարույթների գործերով դատարանը՝

- Հաստատում է շահագրգիռ անձի այս կամ այն սուբյեկտիվ իրավունքի ծագման, փոփոխման կամ դադարման հիմք հանդիսացող իրավաբանական փաստերի առկայությունը,
- Հաստատում է անձի որոշակի իրավական վիճակը կամ ընդհանրապես, իրավիճակ, դրություն,
- Հաստատում է տվյալ անձին պատկանող կամ դրանից բխող այլ ենթադրյալ իրավունք:

Հատուկ վարույթների գործով մի շարք դատավարական ինստիտուտներ կիրառության մեջ չեն մտնում, այնպիսիք ինչպիսիք են հակընդդեմ հայցը, ոչ պատշաճ կողմի փոխարինում, հայցերի միացում և առանձնացում, հայցապահանջների ավելացում, հայցային վաղեմություն, պահանջի /հայցի/ ընդունում, դրանից հրաժարում, հաշտության համաձայնությունը և այլն, իսկ դատավարական ամենաառանցքային սկզբունքները՝ տնօրինչականությունն ու մրցակցությունը գործառում են սահմանափակ ծավալով՝ միայն հատուկ վարույթում

շրջանավոր այս կամ այն փաստի, իրավական վիճակի, իրավունքի առկայության կամ բացակայության շուրջ:

Դատարանը հատուկ վարույթի գործերով ոչ այնքան արդարադատություն իրականացնում, քանզի այն պայմանավորված է հենց այդպիսին չիրականացնելու անհրաժեշտության օբյեկտիվ բացակայությամբ, այլ դատարանի այս գործառնությունները նպաստում են արդարադատության իրականացմանը:

Ճիշտ է՝ հատուկ վարույթի վերջնական նպատակը նույնպես նյութական իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն է, բայց այդ նպատակն այս վարույթում իրականացվում է ոչ թե խախտված կամ վիճարկվող իրավունքը վերականգնելու կամ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպական միավորների ու սուբյեկտների /դրանց պաշտոնատար անձանց/ ոչ ճիշտ գործողությունները վերացնելու, ինչպես դա կատարվում է ընդհանուր առմամբ հայցային վարույթներում, այլ հենց իրավաբանական փաստերի առկայությունը կամ բացակայությունը, անձանց որոշակի իրավական վիճակը, շահագրգիռ անձանց այս կամ այն ոլորտում որևիցե իրավունքը հաստատելու միջոցով, բացառապես որի հիման վրա էլ դիմողը հնարավորություն է ստանում դատական աստիճաններից դուրս իրացնելու իր իրավունքները, ազատությունները կամ օրինական շահերը:

Նախագծով առաջարկվում է դատարաններից հանել այդ հատուկ վարույթների մի մասը, և դրանք սահմանել որպես նոտարական գործողություն:

Նոտարն արդարադատության իրականացմանը նպաստող հանրային ծառայություններ իրականացնող անձ է, որը Հայաստանի Հանրապետության անունից, ՀՀ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան իրականացնում է «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքով սահմանված նոտարական գործողություններ և ծառայություններ:

Նոտարն իրավունք ունի տալ իրավաբանական օգնություն, խորհրդատվություն, պարզաբանում կամ իրավական եզրակացություն կամ կազմելու գործարքների կամ այլ իրավական փաստաթղթերի նախագծեր, իրականացնելու իրավական այլ ծառայություններ, ինչպես նաև նոտարական գործողությունների կատարումն ապահովող այլ գործառնություններ:

Նոտարական գործողությունն իրականացվում է անաչառորեն՝ բոլորի համար հավասար պայմաններով:

Նշվածից բխում է աներկբա, որ նոտարի հիմնական գործառույթներն են անվիճելի իրավունքների և անվիճելի փաստերի իրավաբանական ձևակերպումը, ինչպես նաև իրավահարաբերությունների բնագավառում որոշակի իրավաբանական ակտերին, գործողություններին արժանահավատություն ու որոշակիություն հաղորդելը:

Դրանով հանդերձ նոտարիատը դատաիրավական համակարգում կարևոր դերակատարություն ունի: Նա իր ողջ առաքելությամբ նպաստում է այս կամ այն իրավահարաբերությունների առաջացմանը և դրանց պատշաճ ձևակերպմանը, առարկայորեն ապահովելով նույն այդ իրավահարաբերությունների մասնակիցների սուբյեկտիվ իրավունքներն ու ազատությունները, օրինական այս կամ այն շահը:

Ու թեև գործող «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքում կոնկրետ նշված չեն նոտարիատի խնդիրները, սակայն օրենքի վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ նոտարիատի խնդիրների շարքում առանձնանում են այնպիսիք, ինչպիսիք են սեփականության, անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը, օրինականության և իրավակարգի ամրապնդումը, իրավախախտումների կանխումը:

Ընդ որում, նոտարական գործողություններն իրականացնելիս նոտարը իրավական ակտերի ճիշտ և օբյեկտիվ կիրառմամբ ամրապնդում է օրինականությունը՝ իր կողմից ձևակերպված իրավահարաբերությունների բնագավառում, միաժամանակ, մերժելով բոլոր այն գործողությունների կատարումը կամ ուղղակիորեն արգելելով դրանց կատարումը, եթե դրանք հակասում են ՀՀ օրենսդրությանը: Այս մասով նոտարը պարտավորվածություն ունի ստուգելու կնքվող գործարքների և վավերացվող փաստաթղթերի օրինականությունը, ավելին, չի ընդունում «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքով սահմանված պահանջներին չհամապատասխանող փաստաթղթեր, տվյալներ, տեղեկություններ կամ անուղղակիորեն պարտավորեցնում է շտկել դրանք, համապատասխանեցնել ՀՀ օրենսդրության պահանջներին: Այդպիսի վարքագծով նոտարական գործողությունների կատարմամբ շահագրգիռ անձանց իրավունքները,

պարտավորությունները ձևակերպվում են հստակորեն ու միանգամայն պարզորոշ, կողմերի իրական կամքին համապատասխան՝ դրանով հանդերձ կանխելով իրավախախտումները, հետագայում առաջանալիք անշահավետ իրավական վիճակները, վիճելի տարաձայնությունները, դատական վեճերը:

Վերը նշված վկայում է նոտարիատի և դատական համակարգի խնդիրների ընդհանրություն ունենալու մասին, որոնք սակայն իրականացվում և իրենց լուծումն են ստանում տարբեր մեթոդներով և տարբեր ձևերով ու եղանակներով:

Ընդ որում, օրենքը նոտարական գործունեության վրա վարչական և դատական վերահսկողություն է սահմանել: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի համաձայն նոտարական գործողությունների կամ դրանց կատարման մերժումը, նոտարական ակտերի վիճարկումը դատական յուրիսդիկցիայի հարցեր են:

Դատարանի և նոտարիատի ընդհանրության մասին է վկայում նաև այն, որ նոտարը որոշակի դեպքերում ղեկավարվում է քաղաքացիական դատավարության նորմերով, ինչպես օրինակ՝ ապացույցների ապահովման դեպքում:

Ինչպես դատավորները, այնպես էլ նոտարի դեպքում՝ պաշտոնում կարող են նշանակվել իրավաբանական կրթություն ունեցող անձր:

Ըստ օրենքի նոտարի պաշտոնում կարող է նշանակվել ՀՀ գործունակ քաղաքացին, ով ունի իրավաբան բակալավրի կամ իրավաբան դիպլոմավորված մասնագետի որակավորում, չունի դատվածություն, անցել է նոտարական գործունեության առնվազն 6 ամսվա ստաժավորում, իսկ երեք տարվա իրավաբանի մասնագիտական ստաժի կամ գիտական աստիճանի առկայության դեպքում՝ առնվազն երեք ամսվա ստաժավորում և որակավորման քննական հանձնաժողովին հանձնել է նոտարի որակավորման քննությունները:

Օրենքի հիման վրա և օրենքով սահմանված կարգով նոտարի կողմից իրականացվող նոտարական գործողություններն ըստ իրենց բովանդակության լինում են երեք ընդհանրական տեսակի՝

1. անվիճելի իրավունքների հաստատմանն ուղղված նոտարական գործողություններ,
2. անվիճելի փաստերի հաստատմանն ուղղված նոտարական գործողություններ,

3. իրավահարաբերությունների ապահովմանն ուղղված կամ պահպանական նոտարական գործողություններ:

Անվիճելի իրավունքների հաստատմանն ուղղված նոտարական գործողություններ են՝

ա/ ժառանգության իրավունքի վկայագրի տրամադրումը,

բ/ ընդհանուր համատեղ կամ ընդհանուր բաժնային սեփականության ներքո գտնվող գույքը բաժանելը կամ դրանից բաժինն առանձնացնելը, որոնց միջոցով նոտարը իրավական ուժ է տալիս իրավահարաբերության շահագրգիռ սուբյեկտի մինչ այդ ունեցած սուբյեկտիվ իրավունքներին, ՀՀ անունից հաստատում է նրանց ժառանգ կամ սեփականատեր լինելը:

Անվիճելի փաստերի հաստատմանն ուղղված նոտարական գործողությունները իրենց հերթին ստորակարգվում են հետևյալ ենթախմբերի՝

ա/ իրավաբանական փաստերի հաստատմանն ուղղված նոտարական գործողություններ, դրանք են գործարքների հաստատումը, դրամական միջոցների դեպոզիտ ընդունումը, քաղաքացու ողջ լինելու փաստի հաստատումը, անձի որոշակի վայրում գտնվելու փաստի հաստատումը, լուսանկարում պատկերված անձի և քաղաքացու նույնությունը հաստատելը, փաստաթղթերը ներկայացնելու ժամանակը հաստատելը, անձանց դիմումները, հայտարարությունները և այլ փաստաթղթերը այլ անձանց փոխանցելը:

բ/ ապացուցողական փաստերի հաստատմանն ուղղված նոտարական գործողություններ, դրանք են ապացույցների ապահովումը, թարգմանությունների իսկությունը վավերացնելը, փաստաթղթերի պատճենների և դրանց քաղվածքների իսկությունը վավերացնելը, փաստաթղթերի վրա եղած ստորագրությունների իսկությունը վավերացնելը:

Իրավահարաբերությունների ապահովմանն ուղղված նոտարական գործողությունները ներառում են ժառանգական գույքի պահպանումը, փաստաթղթերն ի պահ ընդունելը, ժառանգների պատասխանատվության ապահովման միջոցներ կիրառելը: Նշված գործողությունների միջոցով նոտարը նպաստում է ամրապնդելու այնպիսի տվյալներն ու տեղեկությունները, որոնք կարող են օգտագործվել վեճ ծագելու դեպքում կամ որոնք հնարավորություն են տալիս

փաստաթղթերն ընդունող մարմիններին համոզվելու դրանց տակ եղած ստորագրությունների, թարգմանությունների իսկության մեջ:

Ինչպես արդեն նշվեց, հատուկ վարույթի հարուցման դիմումները որևէ առանձնահատկություններ չեն պարունակում և ենթարկվում են հայցադիմում ներկայացնելու համար սահմանված պահանջներին: Դրանք քննվում են ոչ բարդ ընթացակարգով, կողմերի սահմանափակ կազմով, քննության ընթացքում ապացուցման գործընթացը անմիջականորեն տեղի է ունենում ոչ թե կողմ-կողմ մեխանիզմով, այլ կողմ-դատավոր հարաբերակցությամբ, որտեղ դատավորի առջև ընդամենը կողմից պահանջվում է բացահայտել /ներկայացնել/ գործի առկա հնարավոր փաստական կազմը, և որի դեպքում դատավորի ներքին համոզմունքի ձևավորումը ուղղակիորեն կախված է լինում կողմի ցուցմունքից, ներկայացրած այս կամ այն ապացույցից, կամ դրանցից որևէ մեկից: Շատ դեպքերում դատարանն ու կողմը բախվում են այսպես ասած՝ անապացույց՝ վարույթի, որի լուծումը ընդամենը կախված է դատավորի ներքին համոզմունքից:

Դատական մարմնի խնդիրն է պարզել անձի համար կարևորություն ունեցող իրավաբանական փաստի գոյությունը, հասկանալ դրա իրավաբանական նշանակությունը և ապա շարադրել /հաստատել/ այն՝ իրավահարաբերության անորոշ թվով սուբյեկտների համար անվիճելի դարձնելով դա այլևս:

Այս գործընթացը իրականացնելիս, ինչպես վերևը նշվեց, արդարադատություն բառի իսկական իմաստով չի իրականացվում, այլ դատարանը նպաստում է դրա իրականացմանը, որի արդյունքում շահագրգիռ սուբյեկտի սուբյեկտիվ իրավունքը կյանքի է կոչվում առանց դատական հարկադրանքի: Դատարանի նման վճիռը երբևէ հարկադիր կատարման բովանդակություն և իմաստ չի ստանում, սակայն այն կարծեք թե վեր է ածվում այն նույն իրավաբանական փաստի մարմնավորմանը, որը նախկինում գոյություն է ունեցել /օրինակ՝ ծննդյան, ամուսնության, ապահարզանի գրանցման փաստը, դժբախտ պատահարը և այլն, հաստատող դատարանի վճիռը ձեռք է բերում և տվյալ անձի համար հանդիսանում է ծննդյան վկայական, ամուսնության կամ ամուսնալուծության վկայական, դժբախտ պատահարի ակտ կամ դրանք ստանալու միակ փաստաթուղթը/: Իսկ արդարադատության իրականացմանը նպաստումը որպես գլխադասային գործառույթ տիպիկ է հենց նոտարիատին: Իսկ

դատարանը նման գործառույթներն իրականացնում է հարակից եղանակով, իր հայցային վարույթի գործերին զուգահեռ՝ հարմարեցված հայցային վարույթի ընդհանուր կանոններին և այն բացառություններով հանդերձ, որոնք յուրահաստուկ են հաստուկ վարույթի այս կամ այն գործին:

Այս մասով թերևս զուգահեռները նոտարական մարմինների ծավալած գործունեության հետ շատ ընդհանրական են, եթե չմատնանշվի նույնականությունը ևս: Օրինակ՝ նոտարը ժառանգության ընդունման և ժառանգության բացման վայրի կապակցությամբ ևս իրավահաստատող գործունեություն է իրականացնում՝ պարզելով դրանց իսկությունն ու գոյությունը՝ օգտագործելով բացառապես բոլոր այն եղանակներն ու մեթոդները, ինչ դատարանը նման գործ քննելիս: Նույնը վերաբերում է քաղաքացու ողջ լինելու կամ որոշակի վայրում գտնվելու փաստի հաստատմանը, որը թեև հանդիսանում է անձին բացակայող կամ մահացած ճանաչելու գործընթացի հակապատկերը, սակայն ընթանում է նույն եղանակով, մեթոդներով, նույն ապացուցողական ճանապարհով, ինչ դատարանում:

Ընդ որում, եթե նոտարը գործ ունի ներկա ժամանակահատվածում իրավաբանական փաստերի հաստատման հետ, ապա դատարանը ինչպես ներկա, այնպես էլ անցյալ ժամանակահատվածում տեղի ունեցած իրավաբանական փաստերի հաստատման հետ: Այս անջրպետը արհեստական է, քանզի անցյալում, թե ներկայում տեղի ունեցող իրավաբանական փաստերի հաստատումը այս կամ այն մարմնի յուրիսդիկցիայի որոշումը օրենսդրի հայեցողության հարց է: Նոտարիատը օրենսդրի ցանկությամբ իրականացնում է ա/ անվիճելի իրավունքների և բ/ անվիճելի փաստերի հաստատմանը ուղղված նոտարական գործողություններ, ինչպես նաև իրավահարաբերությունների ապահովմանն ուղղված նոտարական գործողություններ: Նման բնույթի գործառույթներ իրականացնում է նաև դատարանը, սակայն դա իրականացնում է այլ ընթացակարգով և պայմաններով, ուստիև նման գործողություններն էլ նոտարականի փոխարեն անվանվում են դատավարական գործողություններ, ընդամենը:

Բացի այդ նշված գործառույթները իրականացնող իրավասու անձինք /դատավորը, նոտարը/ ունեն հավասարազոր բարձրագույն իրավաբանական կրթություն, որակավորված իրավաբանի մասնագիտություն, անցել են



համապատասխան որակավորում, ունեն աշխատանքային ստաժ և փորձառություն, ենթարկվում են հատուկ կանոնակարգված էթիկայի կանոնների: Երկուսն էլ գործում են Հայաստանի Հանրապետության անունից, հիմք են ընդունում և աներկբա ղեկավարվում են ՀՀ օրենսդրությամբ, նրանց ամենօրյա գործունեությունը հստակ և անշեղորեն կանոնակարգված է և այստեղ գործում է ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածով սահմանված պոստուլատը, այն է՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարել միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

Մյուս կողմից նոտարիատում, ի տարբերություն դատարանի, անխտիր գործում է անմիջականության սկզբունքը, որտեղ բոլոր դեպքերում, նոտարն անմիջականորեն շփվում է իրեն դիմած շահագրգիռ անձի կամ նրա իրավասու ներկայացուցչի հետ, ստուգում նրա ինքնությունը, իրավունակությունը, գործունակությունը, պարզում նրա այլ անհատական տվյալներ:

Նոտարը իրեն այս կամ այն գործողությունների կատարման համար ուղղված դիմումի կապակցությամբ ձեռնամուխ է լինում անմիջականորեն, առանց /չենթադրվող/ հետաձգումների, կասեցումների, նախնական հետվերադարձի կամ դիմումի մերժման, օրենսդրորեն պարտավորություն ունի հասկանալու, պարզելու և ընտրելու իրավունքի համապատասխան նորմը համապատասխան իրավահարաբերության նկատմամբ կիրառելու համար: Ընդ որում, որպես կանոն նոտարական գործողություններն էլ կատարվում են դրա համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը և փաստերը ներկայացնելու օրը: Այստեղ նաև անհրաժեշտության դեպքում գործում են դատավարական անալոգ այնպիսի իրավական ինստիտուտներ, ինչպիսիք են վարույթի իրականացման հետաձգումը, կասեցումը, մերժումը, ինքնաբացարկի կատեգորիկ պայմաններ և այլն: Արդյունքում ինչպես դատավարական վարույթում, այստեղ ևս վարույթն ավարտվում է համապատասխան /նոտարական ակտ/ կազմելով: Ընդ որում, այդ ակտը ունի ամրագրման համապատասխան գործընթաց /գրանցվում են հատուկ գրանցամատյաններում՝ սեղանամատյանում, առանձին համարի տակ/: Նշված ակտն էլ անցնելով նոտարի վավերացումը հաստատվում է դրա օրինականությունը, հաղորդվում է

փաստաթղթին լիարժեք ապացուցողական ուժ, ապահովելով դրա օրենքով նախատեսված հանրային հեղինակությունը:

Ելնելով վերոշարադրյալից՝ նախագծում առաջարկվում է նշված հատուկ վարույթները արտադատականացնել և նախատեսել որպես նոտարի գործողություն:

#### **Ակնկալվող արդյունքը.**

Սույն նախագիծն ընդունվելու դեպքում կկենսագործվեն «Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության նախագահի 01.07.2012թ. կարգադրությամբ նախատեսվեցին քաղաքացիական արդարադատության արդյունավետության բարձրացման ուղղված միջոցները, կապահովվի դատավարությունում կապահովվի մրցակցության և գործը ողջամիտ ժամկետում քննելու սկզբունքների կենսագործումը, առաջին ատյանի և վերաքննիչ դատարաններում գործերի միատեսակ քննությունը: